

ՄՐՐԻԿ ԵՂԱՃ է որ երբեմն վեց օրուան մէջ 5000 ԺԹԼԱՅԻՆ մլրճ տեղ վազեր է :

Հովին արագութիւնը ինչ կերպով կրնայ չափուիլ .

— Ամպի մը շուքին երկրիս երեսը վազելուն արագութենէն :

Այս բանիս համար հողմաչափ գործիքը հնարուած է, որով հովին հրելու ոյժն եւս կիմացուի :

Մի եւ նոյն հովը մթնոլորտին բոլոր բարձրութեանը մէջ կտիրէ թէ ոչ .

— Ոչ միշտ . անոր համար շատ անգամ կտեմնեմք որ ամպերը անշարժ կկենան եւ կտմ հողմացուցին պարաելուն հակառակ կողմը կերթան :

Հովերուն օգուտն ինչ է .

— Նախ՝ շատ օգտակար են օգոյն տաքութիւնը զուգակշիռ կտմ միակերպ պահելու եւ օգը մաքրելու :

Երկրորդ , մասնաւոր երկիրներու վրայ ամպեր ու անձրեւներ քշելով բերելով՝ անոնց ոռոգուելուն պատճառ կլինին :

Երրորդ , ծաղկըներուն ծուծերը կտմ հունաերը տեղէ տեղ կտանին , եւ բնական կերպով հեռու տեղեր կտրմանեն զանոնք :

Չորրորդ , նոցա ուժովը մարդիկ նաւեր

կրալցընեն ծովուն վրայ , աղօրիքներուն (ջաղացքներուն) թեւերը կտարտցընեն , եւ այլն :

Ամերիկայէն եւրոպա հովով բերուած ծաղկըներ կան :

Հովով օգը ինչպէս կմաքրուի .

— Արտաշնչութիւններուն՝ այսինքն երկրէս եղած գոլորշիններուն մթնոլորտին մէջ ցրուելով . վասն զի անոնք երբ մէկ տեղ մը ամիսիուած մնան , այն ատեն միայն վնասակար են . ուստի հովը քաղաքներուն օգը կրնորոգէ , գործարաններէն եղած ծուխներն ու շոգինները կաւլէ կտանի , եւ այլն :

Ինչքն է որ մեծ ցամաքներուն վրայէն փչող հովերը ընդհանրապէս չոր են , իսկ մեծամեծ ծովերուն երեսէն փչողները անձրեւ կբերեն .

— Վասն զի ցամաքին վրայէն փչող հովերը , ցամաքին երեսէն սակաւ խոնաւութիւն կծըծեն , իսկ ծովուն երեսէն անցնողները գրեթէ միշտ լի են գոլորշեօք .

Ինչքն է որ չոր հովի կտմ սառուցի ատեն մարդուս ձեռքերը կծաթըլուածին .

— Վասն զի նախ՝ օգը կաշիին բոլոր խոնաւութիւնը կծըծէ .

Երկրորդ , հովը կտմ սառոյցը առաջ տեսակ մը բորբոքումն կպատճառէ , յետոյ կաշին գոյնը կնետէ ու կծաթըլուածի :

Ե Ա. Խ Ա. Պ Ա. Շ Ա. Բ Ա. Ա Կ Ա Ն Ք

ԲՈՒ ԹԱԶՈՒՆԻ :

Բու (պայտուշ , պուսու) Թռչունը ո՞ր տանը վըրայ որ նոտի ու կանչք՝ նշան է թէ այն տնէն մարդ պիտի մեռնի կրսեն : — Այս կարծիքը շատ ժողովրդոց մէջ կայ , եւ պատճառը՝ միայն բուին տիսուր ձայնով ու ընդհատ ընդհատ կանչելն է գիշեր ատեն , որով մարդուս վրայ բնական կերպով սոսկում մը կուգայ : Բաց յայնմանէ , բու թռչունը աւերակներ ու անմարդաբնակ տեղեր

բնակիլ ու պտըտի կտիրէ , եւ անոնց մէջ գտնըւող մկները եւ ուրիշ մանր կենդանիները , կամ թէ բարձր ծառոց խոռոչներուն մէջ բոյն դրած թռչունները բռնելով կապը . ինքն ալ պաղ ու հով տեսք մը ունի՝ մայնին նման . այս յատկութեանցը պատճառաւ այնպէս երեւցեր է մարդկանց թէ հիւանդի մը մեռներւն ատենն ալ կիմանայ ու կգուշակէ նա իւր ողբական մայնովը ,

որ բոլորովին անհիմն ու ծիծաղական կարծիք է:

Այս խեղճ թռչունն ալ իրեն համար ձայն ու եղանակ ունի, ու անշուշտ կարծէ թէ գիշերային երաժիշտներէն մէկն ալ ինքն է: Ուրիշներուն բան մը չտեսած ատենը՝ ինք կտեսնէ, ու օդին հանդարտութիւնը եւ բոլոր ընութեան թմրութիւնը տեսնելով՝ կսկսի ձայնը ծգել ու երգել, բայց միակերպ ու կտրած կտրած ծանր կանչով մը, իբր թէ վախնալով որ մարդիկ եւ անասունք ու թռչունք իրենց քնէն չարթըննան, այլ միայն իւր ընկերն ու ծագերը իմանան թէ ինքն ո՛ւր է, եւ քովը գան, կամ պատասխան տան: Ասկից եւս կտեսնուի թէ տան մը երդիքին վրայ կամ ծառին վրայ նստած ու կանչած ատենը ամենեւին միտք չունի գուշակութիւն ընելու թէ այն տանը մէջէն մարդ պիտի մեռնի շուտով:

Ատենով արաբացի ֆիլիսոփային մէկը իւր աշակերտին հետ դաշտին մէջ զբօսանքի պտըտած ատենը՝ խաղ կանչողի ձայն մը կլսէ՝ բուի մայնէն ալ գարշելի. կդառնայ կըսէ աշակերտին թէ «Աւելորդապաշտ մարդիկ կարծեն որ բուին ձայնը մարդ մեռնելուն գուշակութիւն է. եթէ այս բանը ճշմարիտ լինէր, այդ մարդուն ձայնը բուի մեռնելուն նշան կլնէր անշուշտ»:

Հապա ինչէ՞ն է որ տան մը վրայ բու կանչելին ետեւ անպատճառ մէկը կամ մէկալը կմեռնի անկից: — Վասն զի այն տունն ալ անմահից բընակարան չէ, եւ կրնայ մէկը մեռնիլ, բայց առանց բուին իմանալուն ու իմաց տալուն:

Ամանք աւելի ալ իեռու կտանին իրենց նախապաշտումք: Դրած են մտքերը թէ բուն՝ ոչ միայն կգուշակէ այս կամ այն տան մէջ մայ պատահելիքը, հապա նաեւ իւր անէծքի կամ վայ տալու նման կանչովը յիրաւի մէկուն մահուանը պատճառ կլինի. — որ յայտնի զրպարտութիւն է խեղճ թռչունին վրայ, եւ միանգամայն մեծ անմտութիւն՝ ըսողին կողմանէ: Իրաւ, տխուր է ընութեամբ բու թռչունը, բայց ո՞վ ըսեր է թէ ուրիշներուն վայ տալու համար եղած է: Խոկ այն մարդն որ իւր չարագործութեամբը Աստուծոյ բարկութեանը կամ մարդկանց անէծքին արժանի եղեր է, ու խղմտանքէն կտանչուի, ո՞չ ապաքէն իրաւունք ունի վախնալու ոչ միայն բուին ձայնէն, այլ եւ քամիին փչելէն, տերեւներուն շրշիւնէն, ջրի կարկաչէն, եւ մինչեւ սոխակին քաղցրածայն երգէն. եւ Դաւիթ մարդարէին հոգեշունչ բնարն անգամ լած ժամանակը՝ գուցէ Խաւուղի մը պէս կատղի ու մարդապանութեան

եւ անճնասպանութեան ծեռք զարնէ. — ուրեմն Բուն ի՞նչ յանցանք ունի:

Բայց զարմանքը այն է որ այս զրպարտեալ թռչունն եւս — ուրիշ նախապաշտումանց որ նայիմք — մէկ երկու աղէկ բաներ ալ ունի կըսեն:

Մէկը այս՝ որ աղաւնոցի մէջ բոյն որ դնէ, աղէկ է, այսինքն աղաւնոցին տիրոջը յաջողութիւն կըերէ: — Կերեւի թէ անոր համար որ աղաւնի խղդող կատուները, կուզերը (սամսարները) եւ մկները կվախնան ու կփախչին բուէն:

Մէկն ալ այս, որ աւելի եւս զարմանալի բան է՝ թէ որ ճշմարիտ լինէր: Բուին սիրտն ու աջ ոտքը ա՛ռ, ու քուն եղած մարդու մը վրայ դիր, իսկոյն քուն եղողը կսկսի իւր ըրած բաները պատմել, ու ի՞նչ հարցմունք որ ընես՝ պատասխանները կուտայ: — Այդ անհիմն խօսքին պատճառ անտարակոյս այս մտածութիւնն եղած է թէ որովհետեւ բուն՝ գիշեր ատեն քալող ու իբր թէ գուշակութիւն ընող թռչուն է, նորա սիրան ու ոտքն ալ զօրութիւն ունին քնացող մարդուն վրայ գիշերաշըկութիւն կամ քնախօսութիւն բերելու:

Դարձեալ, ըսողներ կան թէ բուին սիրտն ու ոտքը թեւերուդ տակն որ պահես, շները չեն կրնար վրադ հաշել: — Ենէ վախցողները (ինչպէս նաեւ մարդկանց չարախօսութենէն վախցողները) թող փորձեն. բայց վախեմ թէ կիսաբուին, ու թէ որ իրենք բաւական սրտոտ չեն՝ չեմ կարծեր որ բուին սրտէն օգուտ մը տեսնեն:

Խօսք վերջացցնեմ ասով որ իին ատենի Ցունաց առասպելներուն նայելով, բու թռչունը Աթենասայ նուիրուած էր. եւ որովհետեւ Աթենասը իմաստութեան աստուածուի կիհամարուէր, բուն ալ պատույ հասեր է՝ իբրեւ իմաստութեան նշան: Խոկ թէ ի՞նչ պատճառաւ, յայտնի չէ: Արդեօք կռապաշտից իմաստութիւնը այնչափ խաւարայի՞ն կամ խաւարասէ՞ր էր որ այս գիշերային թռչունը օրինակ լինի անոր. կամ թէ իրենց կարծեօքը իմաստուն մարդը անպատճառ պէտք է որ աւելակներու անպատճառ մէջ քաշուած մինակ նսաի, ու աշխարհիս խեղճութեանցը վրայ ողե ընէ: — Թերեւս աւելի խելքի յարմար կուգայ ոմանց ըսածը թէ Բուն օրինակ է այն ինքնահաւան կէս գիտուններուն որ Աստուծոյ մեզի յայտնած արեւու պէս պայծառ ճշմարտութիւնները կուրանան, ու միայն իրենց աչքին տկար լուսովը՝ իրենց խելքին ու կրիցը յարմար հաւատք կամ իմաստութիւն ինարելու կաշխատին: